

*Շրջակա միջավայրի նախարարության*

*«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---

*Հուլիսի առաջին տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## *ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Հուլիսի առաջին փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում, մի փոքր դրական շեղումով:*




*Ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են փասնօրյակի երկրորդ կեսին. Տավուշում գրանցվել է +28…+33⁰C Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +26…+28⁰C, նախալեռնային շրջաններում՝ +36…+38⁰C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +37…+38⁰C, նախալեռնային շրջաններում՝ +28…+30⁰C, Շիրակում՝ +24…+28⁰C (Գյումրի՝ +30⁰C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +24…+29⁰C, նախալեռնային շրջաններում՝ +30…+32⁰C, Գեղարքունիքում՝ +22…+27⁰C, Լոռիում՝ +24…+28⁰C, Արմավիրում՝ +35...+37⁰C, Արարատում՝ +35…+39⁰C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +25…+27⁰C, նախալեռներում՝ +30…+35⁰C:*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հուլիսի 1-3-ին: Տավուշում գրանցվել է +12…+14⁰C (Դիլիջան՝ +8⁰C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +7…+9⁰C, նախալեռնային շրջաններում՝ +14…+17⁰C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +15...+20⁰C, նախալեռնային շրջաններում՝ +9…+12⁰C, Շիրակում՝ +2…+7⁰C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +6...+10⁰C, (Հանքավան՝ +3⁰C), նախալեռնային շրջաններում՝ +10…+12⁰C, Գեղարքունիքում՝ +6…+10⁰C, Լոռիում՝ +7…+10⁰C (Տաշիր՝ +4⁰C), Արմավիրում՝ +14...+15⁰C, Արարատում՝ +14...+17⁰C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +2...+6⁰C, նախալեռներում՝ +10...+14⁰C:*




*Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 16-23մմ (77-139%) Արթիկ՝ 43մմ (328%) Լոռիում՝ 20-54մմ (72-263%), Տավուշում՝ 14-33մմ (89-140%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 22-40մմ (62-161%), նախալեռներում՝ 2-10մմ (24-65%), Գեղարքունիքում՝ 13-24մմ (56-93%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 2-27մմ (12-82%), նախալեռներում՝ 3մմ (32%), Արմավիրում՝ 3մմ (37-59%), Արարատում՝ 2-3մմ (53-75%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 8մմ (45%), նախալեռներում՝ 1մմ (17%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 1-3մմ (12-27%), նախալեռներում՝ 4-9մմ (23-42%)։*




*Հուլիսի առաջին տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են +4...+8$^0$C (Աշոցք՝+2$^0$C) Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում՝ +11...+15$^0$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +18$^0$C աստիճան։*

### *Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների*

### *(հուլիս առաջին տասնօրյակ)*




*Հանրապետության շրջանների զգալի մասում բուսականությունը գտնվել է լավ վիճակում, բացառությամբ որոշ հովտային շրջանների: Հուլիսի առաջին տասնօրյակում հանրապետության շրջանների մեծ մասում վեգետացիոն ցուցիչը պահպանել է իր առավելագույն արժեքը:*

*Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ*





























***Հացահատիկային մշակաբույսեր***

*Լեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ դիտվել է աշնանացան ցորենի կաթնային, նախալեռնային շրջաններում՝ մոմային հասունացումը, հովտային շրջաններում այն լրիվ հասունացել է, կատարվել է բերքահավաք:*

*Սիսիանում զարգացած հասկիկների թիվը գլխավոր հասկում 19 հատ է, թերզարգացածը՝ 2 հատ, հասկով ցողունների քանակը 1մ² վրա 483 հատ:*

*Նախալեռնային շրջաններում սկվել է եգիպտացորենի հուրանակալումը, բույսի բարձրությունը փասնօրյակի վերջին կազմել է 86-130սմ, փասնօրյակային աճը՝ 6-34սմ:*

*Դրության գնահատականը լավ է:*

***Պտղատուներ, Խաղող***



*Լեռնային և նախալեռնային շրջաններում պտղատուների մոտ տեղի է ունենում շաքարային նյութերի կուտակում:*

*Հովտային շրջաններում շարունակվել է պտղատուների բերքահավաքը:*

*Արարատյան դաշտում խաղողի ծաղկումն ավարտվել է:*

*Պտղատուների դրության գնահատականը լավ է:*

***Բանջարանոցային մշակաբույսեր, կարտոֆիլ***

*Լեռնային շրջաններում շարունակվել է կարտոֆիլի ծաղկումը, նախալեռնային շրջաններում դիտվել է ծաղկման ավարտը:*

*Արարատյան դաշտում սկսվել է բանջարանոցային մշակաբույսերի հասունացումը, որոշ հովտային շրջաններում դիտվել է բանջարանոցային մշակաբույսերի առաջին ծաղիկների թառամումը, սկսվել է լոլիկի կանաչ հասունացումը:*

*Բանջարանոցային մշակաբույսերի դրության գնահատականը լավ է:*



: